

ՏԱՍՆԵՐՈՐԻ ՏԱՐԻ

ՄԱՍԿ

Տարեկան արժեք 10 ռուբլ, կես տարեկան 6 ռուբլ:
Առանձին համարները 5 կոպեկով:
Թիֆլիսում գրվում են միայն անհատական մեջ:
Գտնարարարացիք սխալում են ուղղակի
Тифлис. Редакция «Маск»

Խմորարարները քաղ է տղա տղան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տոն օրերից)
Հայտարարումները ընդունվում է ամեն լիզուով:
Հայտարարությունները համարժեք զեմբուում են
խորանային քաղին 2 կոպեկ:

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Քաղաքական մտածողները.— ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Նամակ Ախալցխայից, Նամակ Մոսկվայից, Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ, Առարկա-Ունդարիտա, Արտաքին լուրեր.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ՅԱՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ, Գաղթի բեկ:

ԳԱՂԱՔԱԿԱՆ ՄՏԱԾՄՈՒՆԵՐ

Եւրոպայի անդադար պահանջներ է անում Թիւրքիայից. պահանջում է որ նա այս կամ այն վերանորոգութիւն մտցնէ իր երկիրներէն մինի մէջ, պաշտպանէ իր այս կամ այն հպատակ ազգութիւնը հալածանքներից, տայ ինքնավարութիւն իր այս կամ այն նահանգին:

Բայց ինչքան էլ տգէտ լինէին Թիւրք պետական մարդիկ, նրանք շատ լաւ են հասկանում որ այն պահանջները որ եւրոպական երկիրները Թիւրքիային

են անում, իրանք չեն կատարում իրանց երկիրների վերաբերութեամբ: Իրանք պահանջում են Թիւրքիայից ինքնավարութիւն կամ ազատութիւն տալ Թիւրքահպատակ այս կամ այն ազգին, իսկ իրանք հպատակ են ճնշում են իրանց հպատակ ազգերին: Խիստ պահանջներ Թիւրքիայից անելով, — եւրոպական պետութիւնների խրդմնութանը են պետք է աւելի մաքուր լինէր: Թիւրքիայի պէս մի երկրի վրա բարոյապէս ներդրածը համար, հարկաւոր կը լինէր որ Եւրոպայի աւելի մեծ բարոյական հեղինակութիւն ունենար Թիւրքերի աչքում:

Բայց այդ հեղինակութիւնը Եւրոպայի կողմից է, մանաւանդ վերջին տարիները, ոչ թէ միայն Բ. Դրան պետական մարդիկների աչքում, բայց մինչև անգամ Թիւրք մամուլի աչքերում:

Եւրոպայի իրանց պնդող է հասցրել, որ մի որ և է, «Աղբիւր» Թիւրք միջնաւոր լրագիրը իրաւունք ունի ծաղրել Եւրոպային: Եւր Ենզլիսն այս կամ այն խիստ պահանջներ է անում Թիւրքիայից, — Կ. Պօլսի Թիւրք մամուլը պատասխանում է. իսկ դուք ինքներդ ի՞նչ էք անում իրլանդացիների հետ. միթէ դուք նրանց ամենամեծագոյն կերպով չէք ճնշում:

Եւր որ Գերմանիան խաւարում Օսմանեան պետութեան ներքին գործերում, — այդ տեսակ պատասխան է ստանում Թիւրքերից իսկ դուք ինքներդ ի՞նչ էք օրել էլզացիների և լեհացիների հետ, արդեօք ձեր հրէայ հպատակներին էլ այժմ չէք հալածում, արդեօք ձեր Բիւսարի չէ՞ ձգտում կատարել ինքնիշխանութեան ձեռք բերելուն: Եւր Աւստրիան միջամտում է

Բալկանեան սլավոնների կամ յոյների գործերի մէջ, — Թիւրքերը հարցնում են. իսկ ձեր ներգործած ճնշումը բոսնիացիների և հերցեգովինացիների վրա, նրանց մէջ գործած ձեր անիրաւութիւնները միթէ մեզ յայտնի չեն:

Ֆրանսիան արտոյում է իր երկրից հոգեւոր միաբանութիւնները և մի և նոյն ժամանակ պաշտօնապէս յայտնում է Բ. Դրան որ իր հեղինակութեամբ պաշտպանելու է արեւելքում նոյն և կեղեցական միաբանութիւններին: Եւր ժամանակ Թիւրքաց արտաքին գործերի միաստորութիւնը յանգանարար և կատարելա իրաւունքով պատասխանում է Ֆրանսիային պաշտօնապէս թէ Թիւրքիան Ֆրանսիական յանցաւորների համար աքսորանքի տեղը չէ:

Ուրեմն լուսաւորված Եւրոպայի այնտեղ է հասցրել իրան, որ այլ

ԴԱՍԻԹ ԲԵԿ

Պ Ա Տ Մ Ա Կ Ա Ն Վ Է Պ

(1722—1728)

Պատանին մի կողմից չների հետ կուգի, միւս կողմից իր շուրջը աչք անելով, դիմաց գէպի կողով ձայնը հնչող հովիւն մտնելով, փոքր ինչ հանգստացան, երբ նկատեցին, որ նա չէ քաջալերում իրանց վարձուները: Պատանին բարեկեցիկ, նստեց նրա մօտ, հովիւն հասակն առած մարդ էր, այն լեռնային մարդկից մէկը, որ ստէպ անասունների հետ մարդկով, կորցրել էր բոլորը, ինչ որ մարդկային էր, և սեպհակա՛նել էր վայրենի անասնականը: Բայց, որպէս երևում էր, նա իր ոչխարների նման միամիտ, մի և նոյն ժամանակ բարեկամ էր:

— Ի՞նչ ստանայ ես, թէ որ փայտը չը վեր առնէիր, իմ չնորը կը պատահուէին քեզ, ասաց նա ծիծաղելով, որպէս թէ մի մեծ գիւտ էր արել իր նկատողութեան մէջ:

— Զե՛ս, եթէ փայտը չը վեր առնէիր, չները կը պատահուէին ինձ, պատասխանեց պատանին ինչն էլ ծիծաղելով:

— Ի՞նչ ստանայ ես, կրկնեց նա, շարունակելով իր բարեկամ ծիծաղը, — որտեղից դուք այն փայտը, շատ հաստ փայտ էր:

— Այո, շատ հաստ փայտ էր, ասաց պատանին, — այնտեղ ընկած էր, երևի կտորները մոռացել էին:

— Անպատճառ, կտորները մոռացել էին, կրկնեց հովիւն: — Բնույնը հասկացար, Աստուած է վկայ, շատ ստանայ ես:

Կամենալով միանգամից վերջանել փայտի պատմութիւնը, պատանին ոչինչ չը պատասխանեց, Բայց հովիւն զարմեալ կրկնեց.

— Այդ լաւ է պատահել որ կտորները մոռացել էին, Աստուած է վկայ, թէ որ փայտը չը լինէր, իմ չնորը քեզ կենդանի չէին թողնի:

— Այդ ես էլ եմ իմանում, նրա իմաստուն կարծիքը հաստատեց պատանին: — Այդ ոչխարները ունեն են:

— Ումը պէտք է լինեն, պատասխանեց նա մի առանձին հպարտութեամբ: — մեծ պարոնի ոչխարներն են:

Մեծ պարոն ասելով, պատանին հասկացաւ, թէ ում մասին էր խօսքը, և սկսեց ասել յարգանքով վերաբերվել դէպի իր խօսակիցը, երբ խնայաւ, որ նա թագաւորի հովիւն էր:

— Մեծ պարոնը ուրիշ ապրանք էլ ունի, հարցրեց նրանից:

— Այսպիսով ո՞վ ունի այնքան ապրանք, որպէս մեր մեծ պարոնը, պատասխանեց հովիւն: Կարծազական կերպով գլուխը շարժելով. — այստեղ արածում են նրա ոչխարները, այնտեղ, սալի միւս կողմում, արածում են երկու քամից աւելի կովեր, նոյնքան եղներ ու գոմէշներ: Բացի դրանցից, տասը էլ ունի, հինգ ջորի ունի, քսանից աւելի ձի ունի:

— Այդքան ապրանք իս մեր Տաթիւն մէկը Գաւիթն էլ ունի, իր մօքումը ասաց պատանին, ամենեկին չը դարմանալով մեծ պարոնի հարստութեան վրա:

— Այս օրերս էլ ընծայ են բերել երկու ինչ որ անասուններ անունները չեմ իմանում, ասելացրեց հովիւն:

— Ի՞նչ տեսակ անասուններ:

— Ինչ որ տատանայի նման անասուններ. երկայն ոտներ ունեն, երկայն, ծուռ վրդ ունեն: Քանի որ առաջ մեծ պարոնի դրանը զուռնայ անցին, ողջ աշխարհը հաւաքվեցաւ այնտեղ. նրանց դուքս էին բերել, թամաշայ էին անում:

— Ես էլ այնտեղ էի, տեսա, դրանք ուղտեր են, մեր երկրում շատ կայ. չըբեցնում են, յետոյ բնուում են:

— Գրոււտ այդպէս, չըբեցնում են յետոյ բնուում են, ինչ էլ լաւ իմացար, համարիտ, շատ ստանայ ես եղի:

Պատանայ քաղը, որ այնքան յաճախ գործ էր անում հովիւն, նրա լեզուով բոլորովին այլ իմաստ ունէր. դա նշանակում էր խելացի, ամեն բան իմացող, ամեն բան շուտ հասկացող: Բայց զգուշանալով, մի գուցէ ուղտի պատմութիւնն էլ այնքան հեռու տանէր շատախօս հովիւն, որպէս փայտի պատմութիւնը, նա կարճ կտրեց, սկսելով մի այնպիսի խօսակցութիւն, որից կարող լինէր տեղեկութիւն ստանալ փոքրիկ աղջկայ մասին:

— Այդ ոչխարները օրը քանի անգամ կթում են, հարցրեց նա, իր շուրջը նայելով, որպէս թէ ոչխարներին է նայում:

— Քանի անգամ պէտք է կթեն, պատաս-

խանեց հովիւն իր խաղաղ ձայնով. — երկու անգամ են կթում. մէկը կէսօրին, մէկը երեկոյան, երբ ոչխարները տուն են դառնում:

— Կէսօրին, երկի, դաշտումն են կթում:

— Կաշտումը, ապա օրտեղ: Չը տեսար, կնիկները կաթի կփեր տանում էին:

— Տեսայ: Երևի, մեծ պարոնի տուն էին տանում:

— Ապա օրտեղ պիտի տանէին: Այնտեղ էին տանում:

— Այդ կնիկները ո՞վքեր էին:

— Ո՞վքեր պիտի լինէին, մեծ պարոնի քոնէրն էին:

Պատանին փոքր առ փոքր հասնում էր իր հետաքրքրութեան առարկային:

— Նրանց մէջ մի փոքրիկ աղջիկ կար, կարմիր դերիայ ունէր հագած, ո՞վ էր նա:

— Դու թամարի մասին ես հարցնում, ասաց հովիւն բարեկամ ժպտով: — Թամարը մեծ պարոնի կողքը աղջիկն է, շատ անգամ քոնէրի հետ զայլու է ոչխարների մօտ, և երբեմն ինձ համար խզով հաց է բերում: Ես էլ նրա համար քաղում եմ անասուից դեղ, յուն, կաղին և ուրիշ պտուղներ: Ծառ լաւ աղջիկ է Թամարը: Եթէ նրա մայրը չը մեռնէր, Թամարը այսպէս չէր լինի: Մեր աղծման տիկինը լաւ մտիկ չէ տալիս Թամարին: Ախ, լաւ է, որ տղան շուտով մեռնի ու խորթ մօր ձեռքը չընկնի: Հանգուցեալ տիկինը շատ լաւ տիկին էր. ես դեռ պահել եմ օրերիս, որ մի անգամ նա ինձ ընծայեց:

Այնուհետեւ նա սկսեց պատմել, թէ Թամարի մայրը մեռնելուց յետոյ, թէ նա հայրը կրկին ամուսնացաւ, բայց իր նոր կնոջ հետ ապրեց մի քանի տարի միայն: Մի անգամ լեզվիների յարձակման ժամանակ, կռիւի մէջ վերջ տաւ նալով, մեռաւ նա: Այնուհետեւ Թամարը միայն բոլորովին օրը, իր խորթ մօր ապրի: Այժմ թէ Թամարը և թէ խորթ մայրը կենում են մեծ պարոնի տանը, և մեծ պարոնը իր զուակներից չէ ջրկում Թամարին:

Կերջացնելով իր պատմութիւնը, հովիւն իր կողմից սկսեց հետաքրքրել լինել պատանու ինչ ազգից և օրտեղացի լինելու մասին, հարցրեց, թէ նա ինչ է չինում վրաց երկրում, ինչով է ապրում, և երբ պատասխան տուցաւ, թէ ոչինչ պարսպմունք չունի, ասաց:

— Տեսնում եմ, որ դու քաջ աղաք ես, շատ քաջ, իմ չնորի ձեռքից մինչև պոստ մի մարդ էլ չի պոճել, իսկ դու նրանց չըբեցնիր: — Կը ջանկանաս ինձ մօտ մնալ:

— Չեմ մօտ ինչ չինեմ, հարցրեց պատանին ծիծաղելով:

— Ի՞նչ պիտի չինես. ես ինչ որ չինում եմ, դու էլ այն կը չինես, պատասխանեց հովիւն, իր թաւամաղ յոնքերի տակ թաղնված աչքերը լայն բացելով և ուղիղ պատանու երեսին նայելով: — Լսի՛ր, աղաք, շարունակեց նա, — իմ օգնականներից մէկը իմ ցուպը գողացաւ, յետոյ փախաւ: Հիմա ինձ մէկ մարդ է հարկաւոր, դու իմ օգնականը կը դառնաս ու ինձ հետ ոչխարներ կարածանես, մեծ պարոնի ոչխարները, հովանում ես, դա պիտի գործ չէ:

Այդ առաջարկութիւնը, թէ և սկզբում շատ ծիծաղելի թուեցաւ պատանուն, թէ նա նրան շատ հրապուրչէր չէր մեծ պարոնի հովուի օգնական լինելը, բայց, կարծես, մի ներքին ազդեցութեամբ ստիպվեցաւ նա հաշտվել այդ վիճակի հետ: Գլխաւոր շարժառիթը, որ դրդեց նրան կապվել այդ նոր պարսպմունքին հետ, այն էր, որ սա առիթ էր տալ երբեմն տեսնել գեղեցիկ Թամարին, որի ամբախտ պատմութիւնը մի կողմից, իսկ իրանց ցոյց տուած կարեկցութիւնը միւս կողմից, թողել էին նրա սրտում մի խռով, համակրական զգացմունք, որը թէ և ինքը բացատրել չէր կարողանում, բայց միանգամայն տիրել էր նրա հոգուն: Բացի դրանից, նրան քաղցր էր, առժամանակ գոնէ, իր սրտի վշտերը ցրվել լեռների, դաշտերի, անտառների առանձնութեան մէջ, հեռու լինել մարդերի բնակութիւնից, որտեղից ոչ մի մխիթարութիւն չէր գտել նա: Այդ պատճառով նա աւելի բարեւոք համարեց կենակցել միամիտ հովիւների հետ, լսել նրանց պարզ, հասարակ պատմութիւնները, քան թէ լսել աւագակ հայ մանրախաճախ անդադար նախապիւնները, որը այնքան անխիղճ կերպով կողոպտեց նրան:

— Գէ, ասա, աղաք, մնում ես ինձ մօտ, կրկին հարցրեց հովիւն:

— Կը մնամ, պատասխանեց պատանին:

(Կը շարունակուի)

ևս ոչինչ բարոյական ներգործութիւն չունի թիւրքիայի պէս մի փտած պետութեան վրա և սա յանդգնաբար կարող է Լւրօպային պատասխանել. «դուք ինքներդ էլ ճշնում էք ձեր հպատակ ազգութիւններին»:

Ինքն արեւմուտքը կարօտ է կատարեալ վերանորոգութեան և բարոյական յեղափոխութեան, որպէս զի կարողանայ բարոյապէս ներգործել և արեւելքի վրա: Քանի որ Լւրօպան ինքն ճշնող, ազատութեան հալածող կը լինի, նա ոչինչ բարոյական ներգործութիւն չի ունենայ թիւրքերի վրա, ոչինչ հեղինակութիւն չի ունենայ թէև յետագէմ բարբարոս և անբարոյական նացրած, բայց այնու ամենայնիւ բնածին խելք ու դատողութիւն ունեցող արեւելցու վրա:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԱՌԱՅԻԱՅԻՑ

Փետրվարի 27-ին

Ամսոյ 20-ին «Օգոստոս» հիւրանոցում, յոգևոտ սովեցող մի պարահանդէս եղաւ: Ամբողջ հիւրանոցը լի էր բազմութեամբ: Բոլոր տղամականները ծախելուց զկնի շատերին առանց ամսական ընդունելուն և շատերն էլ զրկվեցան տեղ չը լինելու պատճառով: Ինչպէս լսում ենք զուտ արդիւնքը մօտաւորապէս 400 ռ. կը հասնի:

Ամսոյ 25-ին քաղաքային խորհրդարանում 29 իրաւասունների ներկայութեամբ հին քաղաքապետը յանձնեց իր պաշտօնը նոր ընտրված քաղաքապետին, և յոյս յայտնեց, որ նա լաւ պէտք է վարէ իրան ստանձնած պաշտօնը:

Մենք էլ մեր կողմից աւելացնում ենք՝ թէ պ. Գրիգորյան Մարտիկեանցը ազատ կը մնայ իր դէմ ուղղված բոլոր խնդիրներից միայն իր խոհմութեամբ, հեռատեսութեամբ և արդար կառավարութեամբ:

Անցեալ 1879 թիւն մանկավարժական թերթի համար կէս տարվայ բաժանորդագիրը հաւաքեցին 3-ական ռ.: Բայց մինչև այժմ ոչ մանկավարժական թերթի երես տեսանք և ոչ մեր տված փողերը յետ ստացանք:

Ամենայն գործ իրան հետեւողներն ունի. այդ բնական է: Անցեալ տարիները «Արարատեան» ընկերութեան անունով մի քանի անձինք փող հաւաքեցին և իրանց գրպաններում պահեցին: Մի քանիսն էլ տեսնելով որ ձայն հանող, հաշիւ պահանջող չը կայ, իրանք ևս հանգանակութիւն արին և փողերը իրանց գրպաններում ամուր պահեցին, կարծելով որ իրանց կը մնայ: Բայց եթէ այդ պարտները, մի քանի օրից փողերը չուղարկեցին ու հարկն է, այն ատենը տոնաված կը լինեմ նրանց անունները հրապարակ հանելու:

Թեմական վերաեստուչ պ. Գ. Բարխուդարեանցը անցեալ տարվայ օրինաւոր և ապօրինի կարգադրութիւններից զո՞հ մնալով այս օրերս ևս չնորհի Ախալցխայի առաջնորդին մի անսպասելի գործ չինեց, այն է, զեռ մի տարվայ դատաւարութեան շրջանը չը լրացած մի նորեկ ուսուցչի դատերը ձեռքից խլեց: Զարմանալի է, որ կամայականութեան և կամապաշտութեան զո՞հ եղած, իրանց պաշտօնին անյարմար մարդիկ երկար ժամանակ մնում են իրանց պաշտօններում: Այսպիսի մարդկանց վրա արդեօք խղճմանք չունի որ և է ազդեցութիւն, որ ազգային ուսումնարանները չը զոհեն իրանց շահերին: Մեր ուսումնարանների վիճակը օրից օր վատանում է:

ՆԱՄԱԿ ՄՐՈՒԿԱՅԻՑ

Փետրվարի 22-ին

Ամսոյ 1-ին բացվեցաւ Մօսկվայում առաջին ուսանողական համակցութիւնը, որի հիմնադիրն է պատուաւոր քաղաքացի պ. Լեպեշկինը: Պատուական տուն չբեղ զարգացած սեփականներով պատրաստ է ընդունելու իր ծածկութիւն տակ մօտ 50 աղքատ ուսանողներ: Բացի ամենայն տեսակ յարմարութիւններից, որոնցով չէ մօռացել պատուաւորան նուիրատուն չըլաւ, պատկուտ իր մշտական հիւրերի բնակարանը, վերջինները կը ստանան նրանից նոյնպէս մաքուր ճաշ և թէյ: Բնակարանը ունի ընդհանուր սեղանատուն, ծխասենեակ, գրադարան և մի առանձին սենեակ բոլոր ուսանողների քիմիական պարագամունքների համար:

Ով եղել է ուսանող և եղել է աղքատ ուսանող, ով ապրել է նրա անշուք, կիսամերկ և կիսակուշտ կեանքով, նա միայն կարող է արժանապէս գնահատել այդ օրինակելի և բարձր բարեբարութիւնը: Զարգելի նուիրատուի անունը միշտ անմոռանալի կը մնայ ամեն մի ուսանողի սրտում:

Այս հանգամանքը առիթ է տալիս ինձ աւելացնելու մի քանի խօսք:

Շատ ժամանակ չէ, որ մեր պարբերական մամուլը ուղղեց դէպի հայ-ուսանողութիւնը մեղադրական ճառերի մի ամբողջ շարք: Ինչքան չեն գրել, ինչ պահանջներ չեն բարձր ուսանողների վրէժ! Մէկը պահանջում է, որ ուսանողները տակնուվրայ անեն եւրօպական քաղաքականութիւնը և անգլոսթիլիզմատիային մարդասիրական զգացմունքներ քարոզեն, միւսը ծիծաղում է ուսանողների վրա, որ նրանք պարտաւոր լինելով իրանց ներքին կեանքին վերաբերեալ գործերով, անուշադիր են թողնում ազգի վիճակը, երբորդ բարկութեան շանթեր է թափում ուսանողների վրա, որ նրանք իրանց ծակ գրպաններով ու զարգակ փորով չեն հիմնում հայ կապան օրգանն և ի... Եւ այդ կուրիօզների վրայ կանգնելու միտք չունենալ կանամ միայն այն, որ մամուլը հասարակութեան ձայն է: Նա անբաւական է ուսանողութիւնից, անբաւական է ուրիմն և հասարակութիւնը: Բայց թող ներուի մեզ հարցնել, ինչ է արել այդ հասարակութիւնը ուսանողութեան համար, որ այդպէս խիստ պահանջող է հանդիսանում դէպի նա: Հետաքրքրվել է նա արդեօք երբ և իցէ իմանալու ուսանողների դրութիւնը, հասկանալու նրանց պէտքերն ու պահանջները, Մտածել է նա արդեօք զո՞հ մի անգամ իր սեփական ինիցիատիւով օգնութեան ձեռք հասցնելու օտար երկրում աղքատութեան մէջ տանջվող ուսանողութեան վրա: Բազմաթիւ երիտասարդներ ամենայն տարի լցնում են Ռուսաստանի և մանաւանդ մայրաքաղաքների համալսարանները և ուրիշ բարձրագոյն դպրոցները: Ի՞նչպէս են գլուխ տանում նրանք, ինչպէս են «եօլա» գրում, —տուէլ է իրան այդ հարցերը երբ և իցէ բազմապահանջ հայ-հասարակութիւնը կուշտ փորով նստել և քարոզներ կարգալ ի հարկէ հնչուրան է: Եկեք, տեսէք, կամ հարցէք ու իմացէք ուսանողների դրութիւնը, նրանց պահանջները և յետոյ ասպարէզ դուրս եկէք ձեր պահանջներով լիքն ուսանողը լսում է և ձեր զանաւ չէ տանում մուրացկանի պէս իր կեանքի նկարագրներով, այդ չէ նշանակում թէ նա երջանկութեան ու բարօրութեան մէջ է գտնվում: Ապահովէք նրա դրութիւնը նիւթական կողմից, միջոց տուէք նրան չը վատնելու իր մատող թարմ ոյժերը սպորտում ձորելու օրհասական կուշտ, —այն ժամանակը ձեր պահանջները արդար կը լինեն: Գուրս եկէք, հարուստ հայեր!... Լեպեշկինի օրինակը ձեր առաջն է դրած...:

Որքան էլ անուշադիր ու անտարբեր է հասարակութիւնը դէպի ուսանողական պէտքերը, հայ ուսանողը չէ դադարում սիրել իր ազգը: Տաճկաստանից հայի սրտամաշ հաւաքանքները դուցէ ոչ մի տեղ այնքան արձագանք չը գրուեն, որքան ուսանողի վառ և կենդանի սրտում: Զարաշար կը սխալվէք եթէ կարծէք, որ այդ սէրն ու համակրութիւնը լոկ պլաստիկական են: Ուսանողութիւնը գործում է որքան կարող է և որքան հնար է: Նա գրում է, թարգմանում է, զօհաբերութիւններ է ժողովում, հաւաքում է, խօսում է, մտածում է: Գրանից աւելի նա անկարող է անել: Ուսանողը հասկանում է, որ գործելու համար պէտք է մտաւոր պատրաստու-

թիւն ունենալ: Եւ նա կամենում էր պատրաստվել: Նա կամենում էր ուսումնասիրել պատրաստվելու միջոցներից մէկը՝ մարմնի գրականութիւնը, բայց նրան չը տուին այդ միջոցը: Զէք հաւատում է Լեպեշկին:

Այս ամառ ուսանողութեան կողմից եւ մի խնդիր էի ուղղել դէպի մեր հեղինակները: Եւ խնդրում էի նրանցից չը խնայել իրանց աշխատութիւններից մի մի օրինակ ուղարկելու ուսանողութեանը: Եւ համոզված էի որ ուսանողի մի այդպիսի համեստ խնդիրը արձագանք կը գտնի մեր հեղինակների մէջ, այն հեղինակների, որոնք իրանց գրութեանը արձագանք սէր և համակրութիւն անգին յայտնում դէպի ուսանողութիւնը... Բայց դուրս եկաւ, որ իմ յոյսերս ոչ այլ ինչ էին, եթէ ոչ օպտիմիստական ցնորքներ... Ոչ մի հեղինակ, ոչ մի թարգմանիչ արժան չը համարեցին իրանց փառքի բարձրութիւնից ուղարկութիւն դարձնելու ուսանողի խօսքի վրա: Մի ոչ —հեղինակ միայն, պ. Գրիգ. Բարբաւանցը համակրութիւն յայտնեց, ուղարկելով Ալեքսանդրապօլից 10 հատոր գիրք ուսանողական գրադարանի համար: Շնորհակալութիւն մեծապատիւ պարտենի:

Այդ զարմանալի ստույգութիւնը ու անտարբերութիւնը մեր հեղինակների կողմից կարելի է բացատրել երկու կերպով: Կամ հայ մարդը առհասարակ սովորութիւն չունի ուղարկութիւն դարձնելու և մանաւանդ կատարելու լրագրի միջոցով արած առաջարկութիւնները (օրինակները անհամար են), կամ թէ մեր հեղինակների խօսքի ու գործի մէջ ահապին անդունդ կայ: Երկու շատ հնաւ է թղթի միջոցով մարդասիրութեան և փոխադարձ օգնութեան սկզբունքները քարոզել, աշխու, բարոյական համոզմունքներ արծարծել...

Հաւատանք դրանց: Ինչ ողորմելի համոզմունքներ են, որոնք հէնց առաջին անգամ իրականութեան հետ հանդիպելիս ջարդվում են, փլուզվում, անհետանում...

Ի՞նչ է դուրս գալիս այստեղից:

Հայ հասարակութիւնը չէ մտածում տալ ուսանողութեանը նիւթական օգնութիւն, հայ հեղինակները մերժում են տալ մտաւոր օգնութիւն, իսկ նրանք երկուսն էլ պահանջում են ուսանողութիւնից ազգի ցաւերին օգնութիւն... Արդարացի է այդ... Պատասխանեցէք...

Ս. Գաղեանց

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մի հաւաքարարի պարտն գրում է մեզ հետեւալով: «Մարտի 1-ին կատարվեցաւ մի օրիորդի յաղարկաւորութիւնը: Որիորդը նախ սովորելիս է եղել Հաւաքարարի Ս. Մարիամեան ուսումնարանում և այս երկրորդ տարին է, որ Գայեանեան ուսումնարանում էր: Հանգուցեալ օրիորդի հայր, պ. Լազար Լեղիազարեանց, իր աղկալ յիշատակը անմոռաց պահելու համար նուիրեց երկու տոկոսաբեր տոմսակներ՝ մինը Ս. Գայեանեան դպրոցին, միւսը Կ. Պօլսի «Միացեալ ընկերութեանը»: Երկրորդ կտակի դէմ մենք ոչինչ ասելու չունենք: Բայց առաջինի մասին կասենք որ հայը պէտք է տալ քաղցած ինչ և ոչ թէ կ'ուշտ ինչ: Գայեանեան ուսումնարանը առանց այդ էլ ապահովված է: չենք հասկանում Հաւաքարարի Մարիամեան ուսումնարանի մասին ով պէտք է մտածի: Զը մոռանանք որ Հաւաքարար Թիֆլիսի մի բազմամարդ հայոց թաղ է, որտեղ դեռ մինչև այժմ չը կան հաստատ կազմակերպութեամբ դպրոցներ»:

Մեզ պատմում են, որ Ս. Գայեանեան դպրոցը, որ նիւթական կողմից այն աստիճան ապահովված է այժմ, որ միջոցներից դրամական նպատու է նշանակել մի այլ դպրոցին, ինքն կարծեաւ կարողութիւն չունի իր բոլոր դասատուները տաքացնելու: Վարձապետները վերաբերուն հազած մտնում են դասատուներ և այդպէս են դասեր տալիս: Ինչ պէտք է անեն խեղճ օրիորդները: Նորերումս դպրոցի բարձր դասատան մի օրիորդ մտել է չը տաքացած դասատան մէջ և հիւանդացել է:

Մեզ գրում են Ղազարխանի գիւղից (Շիրակի սահմաններից) որ Ֆրանկիստե տեղ նշանակված Ղազարի նոր նահանգապետ զինեալ Գրոման, մտաւ արդէն իր պաշտօնի մէջ և անցաւ այդ նահանգի մի քանի գիւղերի միջով, որոնց բնա-

կիւնները ամեն տեղ ուրախութեամբ նրան հանդիպում և ողջունում էին:

ԼԵՆԿՈՐԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ տեղական վարչութիւնը ուղարկութիւն չէ դարձնում քաղաքի փողոցների անտանելի անմաքրութեան վրա: Փողոցները շատ դւրութեամբ կարելի էր մաքուր պահել, ասում է թղթակիցը, աչքի առաջն ունելով քաղաքի չորս կողմը եղած առաջին առատութիւնը: Բայց թղթակցի ասածին նայելով Լենկորանի մի փողոց միայն, որտեղ երթեկութիւն ունեն և դրօսնում են վարչութեան ներկայացուցիչները, քիչ թէ շատ մաքուր է պահվում: Լուսաւորութիւն բոլորովին չը կայ փողոցներում և ինքն իւրաքանչիւր խանութատեղ իր դրան վրա կամ խանութի առջև չը դրեն իր հաշուով մի լապտեր, անհնարին կը լինէր անցնել փողոցներում հրկոյեան ժամանակ:

ԹԵԼԱՒԻՑ մեզ գրում են: «Փետրվարի 23-ին թէլաւի սբ. Գէորգ Զվէլգալովանի եկեղեցու սենեակում խեղդվեցաւ մի 20 տարեկան երիտասարդ: Միւս օրը, առանց մարմինը զննելու թաղեցին նրան: Արդեօք անձնասպանութիւն էր դա, թէ ուրիշներն են խեղդել նրան, —անյայտ մնաց»:

Մեզ գրում են Թէլաւից և հետեւալով «Տեղիս գործակալը և տէր Արէլ Սուքիասեանց օրերումս եօթ հայաստանցի հայ թշուառներին բաժանեցին իրանց հաւաքած շորերից, տալով իւրաքանչիւրին մի շապիկ, վարտիք, կրկնավարտիք, արխաւուս և չոխա: Նմանապէս մի մի ձեռք շոր մանր երեսաների համար: Ամեն միսին ինչ կտոր: Ընդամենը բաժանեցին 63 կտոր: Այդ մերկ և նիհար գաղթականները քուրդերի ձեռքով հարստահարվածներիցն են: Մի կտոր հացի համար ամենի առաջ խոնարհեցնում էին իրանց գլուխը, ամենքի ոտները պատրաստ էին լիզել: Նրանք կորցրել էին մարդկային պատասխարութեան և ինքնասիրութեան զգացմունքի վերջին նշույլը: Յաւալի էր նրանց վրա նայել: Խեղճերը մնացին այստեղ մի շարքի չափ և յայտնեցին որ գնալու են յինովոյ Բագու-Թիֆլիսեան երկաթուղու գծի վրա մշակութիւն անելու»: Թղթակիցը վերջացնում է իր նամակը բանաստեղծի խօսքերով: «Ափսոս քեզ հայոց խեղճի ժողովուրդ, ցիրուցան եղար անմեղ, անխորհուրդ»:

ԵՐԵՒԱՆԻՑ մեզ գրում են: «Այստեղ թղթախաղը օրից օր աւելի և աւելի է տարածվում հասարակութեան մէջ: Կանայք և օրիորդներ, մինչև անգամ, վաղ առաւօտից իրանց տան տնտեսութիւնը թողած, նստում են թուղթ խաղալու և այսպիսով անցնում են ամբողջ օրը: Մտաւոր զարգացման համար ժամանակ չը կայ: Ամբողջ քաղաքը, աղաներից սկսած մինչև ծառաները՝ բոլորն էլ թուղթ են խաղում ամբողջ օրերը»:

Շնորհակալութեամբ ստացանք այս օրերս Թիֆլիսում տպված մի փոքրիկ հայերէն բրօշուր «Կիւցաղուցք բոտ խորհրդացույց. Հայկ. Արամ, Վահագն, պատկերներ պատմական կեանքից»: Կրթչիլը ստորագրված է չորս տառով Ա. Մ. Ե. Պ. Տպված է Մովսէս Վարդանեանի և ընկ. տպարանում:

Այս օրերս պ. Գ. Պ. Պարեգեալաձէ հրատարակեց ուսերէն լեզուով իր հետազոտութիւնը վրաց եկեղեցական հրովարտական մասին: Այդ գիրքը պէտք է ծառայի որպէս նիւթ մեղ մօտ լինելու հնապիտական ժողովին: Գրքի վերնագիրն այս է. Грузинские церковные гуджари (грамоты). Գրքի գինը 1 ռուբլ է և տպված է Գլխաւոր Կառավարութեան տպարանում:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՌԱՏՐՈՒՆԳԱՐԻԱ

Վիեննայից լրագրիներին գրում են հետեւալով: Այս օրերս կրկին լուրեր տարածվեցան այստեղ, որ զիտաւորութիւն կայ Բօսնիան և Հերցեգովինան վերջնականապէս միացնել Հաբսբուրգների կայսերութեանը: Տեղական մի կիսապաշտօնական լրագիր լ'Առաջնորդող յօդուածի մէջ պարծենում էր: